Կարգապահական գործ թիվ ԿԳ-14138

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի սեպտեմբերի 09-ի թիվ 156-րդ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/86-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԱԳՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ նաև Պալատ) խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ), նիստը նախագահող՝ Մարտուն Փանոսյանի, Խորհրդի անդամներ՝ Նելլի Հարությունյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Կարեն Սարդարյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Մելանյա Առուստամյանի, Կարեն Մեժլումյանի, Ալեքսանդր Սիրունյանի կազմով,

քարտուղարությամբ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Վահագն Մանուկյանին (արտոնագիր № 749) (այսուհետ նաև՝ Պատասխանող), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

<u>1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

11.12.2014 թվականին Պալատ է ստացվել քաղաքացի Սյուզաննա Օհանյանի (այսուհետ նաև՝ Դիմող) դիմումը՝ փաստաբան Վահագն Մանուկյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ:

Դիմողը մասնավորապես նշել է, որ իր բնակարանը կորցնելու կապակցությամբ խարդախության դեպքի հետ կապված դիմել է Վահագն Մանուկյանին (այսուհետ նաև՝ Պատասխանող), որին վճարել է 70 000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ գումար, սակայն վերջինս իր հետ պայմանագիր չի կնքել:

Դիմողը նշել է, որ փաստաբան Վահագն Մանուկյանը վերադարձրել է իրեն 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ գումարը, իսկ մնացած 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ գումարի դիմաց պարտավորվել է գրել հայցադիմում, սակայն ոչ միայն չի գրել, այլ նաև հրաժարվել է վերադարձնել նշված 30 000 դրամը պատճառաբանելով, որ նշյալ գումարը վերցնում է. «..... իր դիվանին նստելու համար»:

Դիմողը նաև հայտնել է, որ վերը նշված միջադեպը տեղի է ունեցել մոտավորապես 11.12.2013 թվականին:

Դիմելով Պալատ՝ Սյուզաննա Օհանյանը խնդրել է փաստաբան Վահագն Մանուկյանի գործողությունների կապակցությամբ հարուցել կարգապահական վարույթ:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 12.01.2015 թվականի թիվ 04-Ա/ԿԳ-15001 որոշմամբ փաստաբան Վահագն Մանուկյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.1.8 և 3.5.5 ենթակետերով սահմանված պահանջների խախտման հատկանիշներով:

Տվյալ կարգապահական վարույթով դիմող է ճանաչվել Սյուզաննա Օհանյանը, կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Արթուր Մարտիրոսյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմողը՝ ներկայանալով Նախապատրաստողի գրասենյակ, հրաժարվել է գրավեր բացատրություն տալուց, պնդել է իր դիմումում նշված տեղեկությունները, մասնավորապես նշել է, որ Պատասխանողի հետ ծանոթացել է մոտ երկու տարի առաջ, 2013թ. հունվար-փետրվար ամիսներին իր ընկերուհու միջոցով: Պատասխանողին տեղեկացրել է, որ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 19.06.2012թ. թիվ ԵԱԴԴ/0180/02/12 վճռով իրեն վտարել են Երևան քաղաքի Շինարարների փողոց, 35 շենքի 20 հասցեում գտնվող բնակարանից: Նշված վճռի դեմ Դիմողը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.08.2012թ. որոշումով վերադարձվել է, իսկ առաջին ատյանի դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

Դիմողի պնդմամբ, Պատասխանողը պարտավորություն է ստանձնել բողոքարկելու Դիմողին բնակարանից վտարելուն ուղղված ԴԱՀԿ ծառայության գործողությունները՝ ՀՀ վարչական դատարան հայցադիմում ներկայացնելու եղանակով: Նույն ժամանակահատվածում Դիմողը վճարել է Պատասխանողին 70.000 ՀՀ դրամ, որպես փաստաբանական ծառայությունների մատուցման վճար, սակայն ծառայությունների մատուցման պայմանագիր վերջիններիս միջև չի կազմվել:

Դիմողի բացատրությունների համաձայն, հայցադիմումը այդպես էլ չկազմվեց, քանի որ Վահագն Մանուկյանը պատճառաբանել է, որ «ԴԱՀԿ-ի գործողությունները արդյունավետորեն բողոքարկելու համար ինչ որ դատախազի պետք է կաշառքի գումար տալ՝ 5 000 ԱՄՆ դոլարի չափով»: Քանի որ Դիմողը հնարավորություն չի ունեցել ապահովելու նշված գումարը, Պատասխանողը այդպես էլ ոչ մի գործողություն չի ձեռնարկել և մեկ տարվա ընթացքում վերադարձրել է Դիմողին ընդամենը 40 000 ՀՀ դրամ գումար, իսկ մնացած 30 000 դրամը հրաժարվել է վերադարձնել պատճառաբանելով, որ նշյալ գումարը վերցրել է Դիմողից «.....իր դիվանին նստելու համար»:

Պատասխանող փաստաբան Վահագն Մանուկյանին վճարում կատարելու վերաբերյալ Դիմողը հայտնեց, որ այն կատարել է առձեռն, Պատասխանողի գրասենյակում, այն չի կատարել բանկային փոխանցումով, ուստի վճարման վերաբերյալ

գրավոր փաստաթղթեր առկա չեն: Դիմողը պնդել է, որ Պատասխանողի կողմից իրեն բարեխիղճ իրավական օգնություն չի ցուցաբերվել և իր շահերի պաշտպանությունը պատշաճ և ժամանակին չի ապահովվել:

Սույն կարգապահական գործով 09.09.2015թ. Խորհրդի նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ կարգով ծանուցված էր, սակայն Խորհրդին անհայտ պատճառներով նիստին չէր ներկայացրել:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Բացատրություն տալու համար Պատասխանողը երկու անգամ հրավիրվել է Նախապատրաստողի գրասենյակ, ինչպես նաև սույն կարգապահական գործով տեղի ունեցած Խորհրդի նիստերին, սակայն որևէ կերպ չի արձագանքել և բացատրություն չի ներկայացրել:

<u>4.Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձ, փաստաբան Արթուր Մարտիրոսյանին, ով 20.03.2015թ.. կազմել եզրակացություն, որի համաձայն Դիմողի կողմից վկայակոչված փաստական հանգամանքները չեն հիմնավորվել:

Կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին 01.04.2015թ.: Սույն գործով Խորհրդի նիստերը նշանակվել են 2015 թվականի մայիսի 20-ին, 2015 թվականի հուլիսի 10-ին, 2015 թվականի հուլիսի 29-ին և 2015 թվականի սեպտեմբերի 09-ին փաստաբանների պալատի վարչական շենքում (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5.<u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ</u>

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

<u>6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պատասխանողի նկատմամբ 2007-2015թ. ընկած ժամանակահատվածում հարուցվել է 6 կարգապահական վարույթ՝ 07.07.2009թ., 13.11.2009թ., 07.06.2010թ.,

19.05.2011թ., 23.05.2014թ. անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով (կարգապահական վարույթները կարճվել են արտոնություն կիրառելու հիմքով), ինչպես նաև 13.07.2010թ. փաստաբանի վարքագծի կանոնագրքի 29-րդ հոդվածի 1-ին մասով (կարգապահական վարույթը կարճվել է):

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահագն Մանուկյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման, հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.7.2 կետի «*Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*»

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել, այս նորմի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմը՝

արդյոք Պատասխանողը բարեխիղճ իրավական օգնություն ցույց չի տվել իր մասնագիտական կարողությունների սահմաններում, արդյոք չի տիրապետել իրավունքի համապատասխան ճյուղը, արդյոք կատարել է հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն և հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 3.1.3 կետի «*Գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա*»: Հետևաբար, անհրաժեշտ է պարզել, այս նորմի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմը՝

արդյո՞ք Պատասխանողը գործը կատարելու էր վճարովի հիմունքներով և եթե այո, արդյո՞ք գործն ընդունելուց հետո ողջամիտ ժամկետում կնքել է իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 3.1.8 կետի «Փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:»

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել, այս նորմի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմը՝

արդյոք Պատասխանողը առանց հաշվի առնելու իր զբաղվածությունը կամ որևէ այլ պատճառ ընդունել է իրավական օգնություն ցույց տալու հանձնարարություն՝ այդպիսով չապահովելով հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 3.5.5 կետի «Փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:»

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել, այս նորմի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմը՝

արդյոք Պատասխանողը ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ է տվել և պաշտպանել է իր վստահորդին և հանդես եկել է նրա անունից:

Փաստաբան Վահագն Մանուկյանի կողմից վերոնշյալ խախտումները թույլ տալու փաստը վկայակոչել և ներկայացրել է Դիմողը: Նման խախտումները կարող են իրականության մեջ օբյեկտիվորեն տեղ գտած լինել, դրանք հնարավոր են և ենթակա են ապացուցման, և համաձայն «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 15-րդ հոդվածի 1-ին մասի, առ այն, որ «Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը», ապացուցելու պարտականությունը կրում է փաստը վկայակոչած Դիմողը: Եվ համաձայն «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 15-րդ հոդվածի 5-րդ մասի ՝ «Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը», տվյալ դեպքում Դիմողը:

Խորհրդի տրամադրության տակ առկա է միայն Դիմողի դիրքորոշումն արտահայտող դիմումն ու բացատրությունը և Խորհուրդը գտնում է, որ կարգապահական վարույթի ընթացքում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնք հաստատեն, որ փաստաբան Վահագն Մանուկյանը

1. չի իմացել իրավունքի համապատասխան ճյուղը, կամ թերի է ուսումնասիրել կամ չի ուսումնասիրել վստահորդի հանձնարարությանը վերաբերող հանգամանքները, կամ հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ չի կատարել, կամ
2. ***գործը կատարելու էր վճարովի հիմունքներով կամ***
3. ***գործն ընդունելուց հետո ողջամիտ ժամկետում չի կնքել իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր, կամ***
4. ***առանց հաշվի առնելու իր զբաղվածությունը կամ որևէ այլ պատճառ ընդունել է իրավական օգնություն ցույց տալու հանձնարարություն՝ այդպիսով չապահովելով հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը, կամ***
5. ***ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ չի տվել և չի պաշտպանել իր վստահորդին և հանդես չի եկել նրա անունից***:

Նշված գործողությունները կատարելու հանգամանքը հիմնավորող ապացույցների բացակայության պարագայում Պալատի խորհուրդը գտնում է, որ

փաստաբան Վահագն Մանուկյանի նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.7.2, 3.1.3, 3.1.8 և 3.5.5 կետերի պահանջների խախտման

հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման՝ վերջինիս կողմից նշված կետերով նախատեսված խախտման կատարումն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ «Փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Փաստաբան Վահագն Մանուկյանի (արտոնագիր թիվ 749) նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.7.2, 3.1.3, 3.1.8 և 3.5.5 կետերի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Սյուզաննա Օհանյանին և փաստաբան Վահագն Մանուկյանին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ **Մարտուն Փանոսյան**